ԸՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Նարինե Կարախանյանի «Արդի հայ կենսագրական վեպը (1990-2015 թթ.)» թեմայով բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող Նարինե Կարախանյանի «Արդի հայ կենսագրական վեպը» ատենախոսության ուսումնասիրության առարկան 1990-2015 թվականների հայաստանյան և սփյուռքահայ կենսագրական վեպերն են, դրանց պատմությանն ու տեսությանը, ինչպես նաև առանձին վեպերի բովանդակային, լեզվաոճական և ժանրակազմիչ առանձնահատկություններին վերաբերող հիմնահարցեր:

Հայ գրականագիտությունը հարուստ չէ կենսագրական վեպի պատմատեսական ընդհանուր և համապարփակ քննության փորձով: Կան առանձին խնդիրներին և առանձին հեղինակներին վերաբերող անդրադարձներ (Ս. Արզումանյան, Է. Ջրբաշյան, Ս. Սարինյան, Զ. Ավետիսյան, Դ. Գասպարյան, Ժ. Քալանթարյան, Սարգիս Վահագն և ուրիշներ), և ներկայացվող ատենախոսությունը՝ ընդարձակ և համակողմանի ընդգրկման ճիգով, շահեկանորեն լրացնում է կարևոր այդ բացը:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից և հիմնական երեք բաժիններից: Ներածությունը ներկայացնում է ատենախոսի ուսումնասիրության առարկան, խնդիրները, թեմայի գիտական նորույթն ու արդիականությունը, ինչպես նաև հետազոտական մեթոդներն ու մոտեցումները:

Առաջին գլուխը՝ իր երկու բաժիններով, ներառում է ժանրի պատմությանն ու տեսությանը վերաբերող հարցեր՝ հայ և համաշխարհային գրականության ծիրում կենսագրական վեպի ձևավորման, զարգացման ընթացքի առանձնահատկություններով և հիմնական միտումներով:

Պատմական ընդհանուր ակնարկն ընդգրկում է անտիկ շրջանից մինչև նոր ժամանակներն ընկած ընթացքը՝ Քսենոփոնից, Պլուտարքոսից, Սվետոնիոսից, Ագաթանգեղոսից մինչև միջնադարյան քրիստոնեական վարքագիրներ, Ռաֆֆի, Օշական, Մորուա... մինչև խնդրո առարկա հեղինակներ և նրանց գործեր: Պատմական այս շղթայից, ցավոք, զարմանալիորեն դուրս են մնացել անտիկ, Վերածնության, Լուսավորականության, նոր և նորագույն շրջանների առանցքային հեղինակներ՝ համաշխարհային գրականությունից Տակիտոսը, Վազարին, Բրանտոմը, Վոլտերը և ուրիշներ, նաև հայ պատմագրության հսկաները, ովքեր ծանրակշիռ ավանդ և դերակատարություն են ունեցել կենսագրավեպի ժանրային ձևավորման,

հարստացման և զարգացման գործում: Աշխատանքը մեծապես կշահեր, եթե նշված բացթողման լրացման հետ միաժամանակ հանգամանալից քննության ենթարկվեին նաև տեսության հարցերը գոնե ժանրի պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունների ներկայացման մակարդակով (օրինակ՝ փաստական նյութի և հռետորականության համադրությունը ժանրի ձևավորման անտիկ շրջանում (Քսենոփոն), պատմականության և գեղարվեստակության միատեղումը Պլուտարքոսի, Տակիտոսի, Սվետոնիոսի, հայ պատմագիրների գործերում, հերոսի անհատական ճակատագրի և ներքին աշխարհի կարևորումը Վերածնության հեղինակների գործերում (Վազարի, Բրանտոմ), պատմական ճշմարտացիության կարևորումը Լուսավորականության շրջանում (Վոլտեր) և այլն):

Կենսագրական վեպը չունի հստակ և ավարտուն ժանրային կառուցվածք. այն համադրական վեպ է՝ ինքնակենսագրական վեպի, պատմավեպի, նաև հոգեբանական, խոհագրական, հուշագրական և բանասիրական վեպերի ժանրակազմիչ հատկանիշներով: Ատենախոսն իրավացիորեն հենց այս համադրականության տիրույթում է դիտարկել ժանրը՝ մատնանշելով ժանրային փոխներգործությունների և փոխներթափանցումների տարբեր դրսևորումներ: Այսպես՝ կենսագրական վեպը և պատմավեպն ունեն առնչության եզրեր գրավոր և բանավոր վավերական աղբյուրների օգտագործման ընդհանրությամբ: Երկուսն էլ հերոսի մասնավոր կյանքի պատմությունը, նրա մտավոր և հոգևոր զարգացման ընթացքը ներկայացնում են փաստական նյութի հենքով: Կենսագրավեպի և ինքնակենսագրական վեպի առնչությունները ևս պայմանավորված են նյութի պատմականությամբ՝ այն տարբերությամբ, որ ինքնակենսագրությունը հեղինակի հիշողության, իսկ կենսագրական վեպը՝ երևակայության աշխատանքի արդյունք է: Ճիշտ են նաև ատենախոսի դիտարկումները կենսագրական վեպի և հուշագրության ընդհանրությունների կապակցությամբ:

Ատենախոսը բարեխղճորեն անդրադարձել է ոչ միայն հայ, այլև համաշխարհային գրականության մեջ կենսագրավեպին առնչվող ամենատարբեր կարծիքների (Բելինսկի, Մորուա, Տինյանով, Բախտին, Ի. Սթոուն, Յ. Մանն և ուրիշներ), պատմական այս հենքի վրա կատարել իր ընդհանրացումները՝ առանձին դեպքերում նաև անհամաձայնություն արտահայտելով այս կամ այն դիտարկման կապակցությամբ: Օրինակ՝ վիճարկում է Ս. Արզումանյանի այն կարծիքը, թե պատմակենսագրական վեպում «գրողը զգում է ինչ-ինչ «կաշկանդումներ»...»՝ գտնելով, որ «նման զուգահեռը սահմանափակում է կենսագրական վեպի իրական առանձնահատկությունները» (էջ 33): Պատմականի և գեղարվեստականի յուրօրինակ միահյուսումը հանդիսացող այս ժանրն իսկապես պահանջում է չափի ու

հավասարակշռումի պահպանման ներքին ունակություն. մեկին կամ մյուսին նախապատվություն տալու դեպքում ծախողումն անխուսափելի է: Վերջին հաշվով, այս ամենը նաև տաղանդի առկայության կամ բացակայության խնդիր է:

Պատմատեսական ընդհանուր ակնարկից հետո «Արդի հայ կենսագրական վեպի խճանկարը» բաժնում ատենախոսն անդրադառնում է ժանրի դրսևորումներին արդի հայ գրականության մեջ՝ ներկայացնելով կենսագրավեպի զարգացման պատմահասարակական հիմքերն ու նախադրյալները, ինչպես նաև հեղինակներին ու հերոսներին:

Երկրորդ գլուխը («Գեղարվեստականի և վավերականի համադրության տիրույթներում») ներառում է վեց բաժիններ, որոնցում քննության են ենթարկվում ատենախոսի կողմից առանձնացված կոնկրետ հեղինակներ և կոնկրետ գործեր՝ Պ. Զեյթունցյանի «Վերջին արևագալը», Ա. Այվազյանի «Պոեմ վասն շենքի և շինության», Հ. Չարխչյանի «Սուլամիթա. Սևակի մեծ սերը» և «Չարենցի կրակոցը», Սարգիս Վահագնի «Արշիլ Կորքի», նաև Ռ. Սևակին նվիրված Ա. Ծառուկյանի «Սէրը եղեռնին մէջ», Հ. Հակոբջանյանի «Սպիտակ էդելվեյսներ», Ալ. Թոփչյանի «Եվ անգամ մահից հետո» վեպերը: Կարծում ենք, ճիշտ ընտրություն է կատարված, որովհետև թվարկված հեղինակները պարզորոշ ներկայացնում են կենսագրական վեպի ոչ միայն ժանրային ձեռքբերումները, այլև ծախողումները: Գնահատելի է նաև ատենախոսի անդրադարձը սփյուռքահայ գրականության մեջ առկա ժանրային դրսևորումներին:

Յուրաքանչյուր հեղինակի ստեղծագործություն թելադրում է ընկալման անհատական մոտեցումներ և վերլուծություն ինքնահատուկ միջոցներ: Ատենախոսին հաջողվել է գտնել և օգտագործել համապատասխան մեթոդներ բովանդակային-գաղափարական, կառուցվածքային-լեզվաոճական տեքստային թափանցումներում: Օրինակ՝ Պ. Զեյթունցյանի վեպի վերլուծության ընթացքում կիրառվել են գոյության փիլիսոփայության, գիտակցության հոսքի, նշանագիտության վերլուծական հնարավորությունները, Ալ. Թոփչյանի վեպը դարձել է առավելապես հոգեբանական վերլուծության առարկա: Օգտագործվում են նաև համեմատական վերլուծության հնարավորությունները: Այդպիսի վերլուծության օրինակներ են Ռ. Սևակի կերպարին անդրադարձած երեք հեղինակների՝ Ա. Ծառուկյանի, Հ. Հակոբջանյանի և Ալ. Թոփչյանի վեպերի համաժամանակյա քննությունը, հաջորդ գլխում՝ Հ. Հակոբջանյանի «Կյանքս այնպես դժվարին էր» և Ա. Ավետիսյանի «Մենավորի աստղը» վեպերի համեմատական վերլուծությունները: Այս առումով անհասկանալի է Պ. Սևակի կապակցությամբ Չարխչյանի և Մելքոնյանի վեպերի տրոհված քննությունը: Լավ կլիներ, որ ընդհանրապես միավորվեին համեմատական քննության

ենթակա բոլոր գործերը և ներկայացվեին տիպաբանական ընդհանրությունների և առանձնահատկությունների տեսադաշտում, ինչը կլրացներ և կամբողջացներ ժանրային տարակերպ դրսևորումների ընդհանուր պատկերը:

Ցավոք, երկրորդ գլխի ամենահաջողված բաժիններում անգամ նկատելի է մի թերություն, որն ընդհանրապես այս ատենախոսության հիմնական թերությունն է՝ շարադրանքի նկարագրականությունը: Այն իհարկե կարող է գիտական մեկնաբանություններում օգտագործվել որպես օժանդակ միջոց, սակայն այս հետազոտության մեջ առանձին դեպքերում նկարագրականությունը ճնշում է քննական-վերլուծական մտքի լայն ու խոր թափանցումի հնարավորությունները, խաթարում շարադրանքի գիտական համակարգվածությունը: Որպես բացասական հետևանք կարելի է հիշատակել նաև վեպերի սյուժետային-կոմպոզիցիոն կառուցվածքի վերլուծության մակերեսայնությունը, իսկ տեսական անդրադարձներում՝ կարծիքներ և մեջբերումներ **հավաքագրելու** պարզունակ միտումը:

Երրորդ գլուխը՝ «Պրոտագոնիստի դժվարին ճակատագիրը՝ իբրև ստեղծագործական ազդակ», ամբողջացնում է հետազոտական աշխատանքի նպատակն ու խնդիրները՝ ընձեռելով նյութը համակողմանիորեն և բազմաշերտ ընդգրկումով ներկայացնելու հնարավորություն: Ատենախոսը դրսևորում է նյութի անհրաժեշտ իմացություն, հերոսների հոգեբանական նուրբ և խոր վերլուծություններ կատարելու ունակություն: Ճիշտ են և դիպուկ Հակոբջանյանի վեպերի կապակցությամբ արված դիտարկումները՝ պայմանավորված դրանցում գերակայող փաստագրությամբ և առանձին փաստերի վիճարկելիությամբ: Կենսագրավեպերի հեղինակներին անդրադառնալիս ատենախոսն իրավացիորեն կարևորում է մի կողմից՝ այն հանգամանքը, թե որքանով են նրանք հավատարիմ մնացել առկա փաստական աղբյուրներին (նամակներ, հիշողություններ, վկայություններ), այսինքն՝ կյանքի, կերպարի ճշմարտացիությանը, մյուս կողմից՝ որքանով են հաջողել եղած փաստերի գեղարվեստական կերպավորման փորձերում: Այս երկուսի համադրական վերլուծությանը զուգահեռ ատենախոսն ինքն էլ, ընդլայնելով քննության տեսադաշտը, ներկայացնում է կարևոր դրվագներ և իրողություններ հերոսների կյանքից, միջավայրից, ստեղծագործական և մարդկային առնչություններից, թեև առանձին դեպքերում նրա մոտեցումները տարակուսելի են, մասնավորապես Մահարի-Սևակ փոխհարաբերությունների կապակցությամբ, երբ հնչեցնում է կտրուկ հայտարարություններ, որոնք թերիմացության և խնդրի պարզունակ, միակողմանի դիտարկման արդյունք են:

Այս ամենով հանդերձ, կատարված ծավալուն և բարեխիղճ աշխատանքն արդի կենսագրավեպի պատմատեսական ուսումնասիրության արժեքավոր փորձ է, ինչը հիմք է տալիս միջնորդելու, որ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող խորհուրդը Նարինե Կարախանյանին շնորհի բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՌՈՒԶԱՆ ԱՐԻՍՏԱԿԵՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր